



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

15 հունիսի 2015թ.

N 8

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Չ Ա Բ Ա Ն Ո Ւ Մ

Ե Տ Մ Ա Ն Դ Ա Մ Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ա Պ Ր Ա Ն Ք Ն Ե Ր Ի Ա Ր Տ Ա Հ Ա Ն Մ Ա Ն Գ Ո Ր Ծ Ա Ր Ք Ն Ե Ր Ի
Հ Ա Ր Կ Մ Ա Ն Ո Ր Ո Շ Հ Ա Ր Ց Ե Ր Ի Վ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Ն

«Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածով սահմանվում է օրենքի կարգավորման առարկան և գործողության շրջանակը, որի մասով օրենքի գործողությունը տարածվում է նաև ԱԱՀ-ին փոխարինող՝ շրջանառության հարկ վճարող համարվողների վրա:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառությունը և (կամ) ակցիզային հարկից ազատումը հիմնավորելու համար արտահանողն իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում արտահանողի լրացրած՝ արտահանման հարկային հայտարարագիրը և ներմուծողի հաշվառման վայրի հարկային մարմնի հաստատած՝ ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում (բացառությամբ Օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի) արտահանված ապրանքների՝ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկված մաքսային արժեքի նկատմամբ առաջադրվում է ԱԱՀ՝ 20 % դրույքաչափով:

Ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներն ու գործառնությունները սահմանված են «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով:

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի համաձայն շրջանառության հարկ վճարողները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի

